

## ԹՐՔԱԿԱՆ ՀԱՄԻՍԼԱՄՈՒԹԻՒՆ

Համիսլամութիւնը մի խոշոր երեսյթ է թրքական աղքատ հասարակական ու մտաւոր կեանքի ճահճում: Նա արտազրել է, արտադրում է, գուցէ և գեռ երկար ժամանակ պէտք է արտադրէ նորանոր երեսյթներ ու ցնցումներ:

Պէտք է ուսումնասիրել այդ երեսյթը, որովհետև նրանով կը բացատրուին շատ ուրիշ երկրորդական ու գիշաւոր երեսյթներ, որոնց էութիւնն ու նպատակը յաճախ թագնուած են մնում ընթերցող մեծամասնութեան համար:

Մենք կը փորձենք մի փարբիկ ուսումնասիրութիւն տալ «Մուրճ»-ի ընթերցողներին համիսլամութեան էութեան, նրա նպատակների և միջոցների մասին: Աղքատ է նրա մասին գոյութիւն ունեցող գրականութիւնը, չափազանց աղքատ: Մեզ մնում է հիմնուել աւելի անձնական փորձերի, դիտողութիւնների ու տպաւորութիւնների վրայ, քան քաղել գոյութիւն ունեցող գրականութիւնից փաստեր:

### I. Ի՞նչ է ԹՐՔԱԿԱՆ ՀԱՄԻՍԼԱՄՈՒԹԻՒՆԸ

Համիսլամութիւնը Թիւրքիայում ծնունդ է առել թրքական պետութեան տնտեսական, պատմական ու քաղաքական պայմաններից: Սուլթանների մայրաքաղաքում կայ մի որոշ շրջան, վարիչների մի խմբակ, որ ձգտում է իրականացնել այդ գաղափարը կեանքի մէջ, նրան մարմին ու արիւն տալ, հոգի ներշնչել: Այդ լոկ ձգտումը դեռ բաւական չէ, արդէն արուեած են բազմաթիւ գործնական քայլեր նրա իրականացման տատասկում ճանապարհի վրայ: Թէ արքան նպատակայարմար են այդ քայլերը, որքան նրանք մօտեցրել կամ հեռացրել են այդ գաղափարի իրականացումը՝ այդ մենք կը տեսնենք յետոյ:

Թիւրքիայի համիսլամական քաղաքականութիւնը ունի մի սրոշ նպատակ, որ կազմուած է երկու բաւական պարզ կերպով իրարից բաժանուող մասերից: Խօսաւոր եւ նեռաւոր նպատակներ:

Նրա մօտաւոր նպատակն է դարձնել Թիւրքիան մի զօրեղ և հուժկու պետութիւն՝ միացնելով ու ձուլելով՝ նրանում բնակուող բազմալեզու, բազմացեղ և բազմակրօն ժողովուրդները «Օթօման» անուան, իսլամական կրօնի և թրքական լեզուի լավերով. ջարդել, փշացնել, գուրս քշել գիմադիր տարրերը.

Երբ Թիւրքիան կը դառնայ մի միապաշտաղ, ձոյլ ամբողջութիւն կազմող իսլամական տարր, մի զօրեղ ու անընկճելի զուտ իսլամական պետութիւն, այն ժամանակ սկսուելու է համիսլամութեան հեռաւոր նպատակը կազմող յարձակողական տարծումը. Դուրս կը գան հաւատացեալները Թիւրքիայի սահմաններից՝ զօրեղ ու անյաղթելի, համախմբուած իսլամական Սանջագը-Շերիֆի (սրբազն դրօշակի) կարմիր լոյսի շուրջը՝ լուսաւորուած Մահիկի գեղին շողերով, կը վարարեն արարաշխարհը, կը ջարդեն, կը փշրեն զեավուրների պարիսպները և կը վերականգնեն Օմարների, Հարուն-Ալ-Խաչիդների փառահեղ խալիֆութիւնը. Ու իսչը կը խոնարհի Մահիկի առաջ...

Այս է Պօլախ «Օթօման ազգասէրների» երազը. Այդպէս են մտածում Ելլորզ-Քէջօշըում և Բաբը-Ալիում (Բ. Դուռա)՝ սկսած սուլթան Համիդից մինչև վերջին հեարիբը (գրադիր). այդպէս էին մտածում թրքական ազատամտութեան—սահմանադրութեան տիրահաջակ հերոսները—Միդհատ փաշան իր ահազին խմբով. նոյն են երազում, մեր կարծիքով, և նորազոյն երիտասարդ-թիւրքերը... գէթ նրանց իննըսունուիննը հարիւրերորդ մասը:

Բայց ինչ դիբը են բռնում նրանք այդ առիթով դէպի Եւրոպան:

Այդ հարցին պատասխանելուց առաջ՝ բանակը մի փոքրիկ փակագիծ:

Հրաշալի է Պօլախ տեսարանը, երբ նաւով մօտենում ես Մարմարայի կողմից: Զախ կողմդ փուռում է Սան-Մտեֆամնօի և Ստամբուլի նկարչական ամիբ՝ իր ամֆիթատրոնով վեր բարձրացող թրքական շէնքերով: Նոյն կողմում, դէպի առաջ, Մարմարայի կապոյտ ալիքները ձեղքելով ներս է ցցւում Սարա-Բուռունի հրուանդանը, որի ներսում տեղաւորուում է Էսկի-Սևրայը (հին-պալատը): Երբ մօտենում ես այդ հրուանդանի ծայրին՝ ձախ կողմդ բացւում է վեհափառ Ոսկեղջիւրը իր անվրդով հայելիանման մակերևոյթով:

Աջ կողմդ ընկնում են Մարմարայի ալիքների հետ «աչքիսփուլի» խաղացող իշխանաց գեղածիծաղ կղզիները, Հայդարավաշան, Մօղա-Բուռունին, Գատը-Քէյօյը և Իւսկիւտարը՝ իր Զամլիճայի բարձունքով, որ մի տեսակ կանաչ թագ ու պսակ է

կազմում ասիական Պօլսի գլխին, Ամեն կողմ կանաչին են տալի թրքական մեզարլիքների (գերեզման) նօնիախիտ մէրիները... Անթիւ-անհամար մղկիթները դէպի ամպերն են ցցում իրանց մարմարէ մինարէների սրածայր կատարները: Իսկ այս ամենի թագուհին, բնութեան հրաշալիք Բօսֆօրը՝ գալարուող օձի նը-ման փուռմէ է ճեր առաջ Մարմարայից մինչև Սև-ծով: Երկու ժամ նաւով գնալու ճանապարհ՝ գրկելով իր ափերի մէջ ահա-զին թուով կայսերական պալատներ ու փաշաների եալիներ (ապարանք):

Նաւդ մօտենում է ափին: Մտնում ես դայեխ (մակոյկ) և դուրս գալիս ափ: Հազիւ փողոց ես մանում, բնութեան այս բոլոր հրաշալիքները, կարծես կախարդական գաւազանի մի հարուածով կորչում, անհետանում են և նրա տեղը բռնում են աղտոտութիւնն ու նեղլիկ, զզուելի արենելեան փողոցները: Ուր էլ գնաս, Պօլսի որ մասն էլ մտնես, ամեն տեղ փողոցները լեցուն կը տեսնես չներով, անվերջ չներով ու աղաւնիներով: Ամեն նոր եկող կարծում է, թէ այդ չներն ու աղաւնիներն անտէր են: Ոչ, նրանք անտէր չեն: Նրանց տէրն է Ղուրանը, ամբողջ իսմալական աշխարհը և մամնաւորապէս թիւրքերը: Սուլթան Բայազէդը հաշակուած է թիւրքերի մէջ իրը մեծ ու բարեգութ, որովհեան մեծ խնամք ու սէր է տաճել դէպի շունն ու աղաւնին, այդ երկու «արբազան կենդանիները»:

Դրանք, ընթերցող, թրքական վարիչ շրջանների, թիւրք գիպլօմատների բնաւորութեան մարմնացումներն են, նրա սիմ-վօնիները (symbols):

Թիւրք գիպլօմատը հետ ու միամիտ աղաւնի է, երբ խօ-սում է իրանից զօրեղի, մանաւանդ «գեավուր» եւրոպացու հետ: «Այն ձեռքը, որ չես կարող կտրել, համբուրիր, ճակատիդ դիր», ասում է թրքական առածք: Այդպէս էլ անում է թիւրք գիպ-լօմատը: Իսկ երբ նա գործ ունի իրանից ցածրերի, մանաւանդ անհաւաս ույաների հետ, այն ժամանակ նա շուն է, նրա բնա-ւորութեան բոլոր անօրտութիւնով, ցինիքական պարզութիւնով ու գաղանութիւնով:

Համիսլամութեան վերաբերութեամբ էլ խաղում է թիւրք իշխանաւորը նոյն երկդիմի—շան ու աղաւնու դերը: Եւրոպայի առաջ նա ձեանում է միամիտ, անտեղեակ, նոյնիսկ ապուշ: Երգուում, կոկորդն է պատուում որ նա իսլամական սուրբ կրօ-նի քարոզներից, նրա լոյսը տարածելու ճգտումից զատ ուրիշ մի ցանկութիւն, ոչ մի հեռանկար չունի իր աչքի առաջ: Իսկ քրիստոնեայ հպատակներից նա երբէք չի թագժնում իր նպատակը: Ընդհակառակը՝ ամեն օր խրոխուում, սպասնում է,

որ «գեավուրլարը քեսեճէրզ» (անհաւատներին պէտք է կոտուրենք), որ «կը դայ շուտով այն օրը, երբ իսլամը կը կործանէ և կը տիրէ ամբողջ քրիստոնեայ աշխարհին»:

Այս վերջին սպառնալիքների համար փաստեր բերելու կարեք չը կայ. իրականութիւնն արդէն խիստ պերճախօս կերպով ցոյց տուեց նրանց գոյութիւնը... Բաւական արին հոսեց... Բերենք գոնէ մի հատ օրինակ թրքական «ազաւնիութեան»:

1895 թուին, երբ թիւրք կառավարութիւնն սկսում էր իրականացնել իր գժոխային ծրագրերը Անատօլիայի քրիստոնեաների վերաբերութեամբ, երբ բոլոր հայկական գաւառներում հայի տաք արիւնի ծով էր դառել. Պարիզում՝ թրքական առատ ոսկիներով տպւում էր մի զիրք—«Թիւրքիան և Օթօմանները» վերնագրով: Դրա հեղինակը հօդէն գ'Ալլօշ Կեղծ անուան տակ ծածկուած մի թրքական լրտես էր, որ, «երեխ, ուղղակի յարաբերութեան մէջ էր եզրարդի հետ: Նա իր գրքում փառաբանում, մինչև երկինք է հանում Արդ-իւլ-Համիդին, նրա հայրական գթառատութիւնը, նրա հանճարը, նրա ազատամտութիւնը... Եւ, վերջապէս, ասում է հետեւեալ խօսքերը համիսլամութեան մասին.

«Շատ անգամ եւրոպական մամուլը խօսել է Սուլթան Արդ-իւլ-Համիդի համիսլամական ձգտումների մասին. իբր թէ նա ծրագրում է միացնել իր գայիստնի տակ բոլոր մահմեդական երկրները: Այն, համիսլամութիւնը գոյութիւն ունի, բայց ոչ արևմտեան զրոյների ասած մաքով: Նա չի ներշնչուած մի քաղաքական գաղափարով: Նրա չութիւնն է մի զուտ կրօնական գաղափար: Նա հիմնուած չէ ոյժի, այլ հաւատի վրայ: Ինչպէս որ Պապի ձայնը երբէք անլսելի չի մնում ամբողջ աշխարհի կաթոլիկների կողմից, այնպէս էլ Խալիֆի ձայնը թընդացնում է հողագնտի բոլոր իսլամների սրտերը. այս ազդեցութիւնը, որ շատ խորարմատ է, իբր մի բարոյական ազգեցութիւն՝ եւրոպային անհանգիստ անելու ոչինչ չունի իր մէջ, որովհետեւ նա դորձ է ածւում քաղաքակրթութեան օգտին»...

Այդ է թրքական բոլոր պաշտօնական հերթումների մեթօդը. սեր ճերմակ հրատարակել, եղածը՝ չեղած...

## II. Ի՞ՆՉՊէՍ ԵՆ ՄՏԱԾՈՒՄ ԻՐԱԳՈՐԾԵԼ ՀԱՄԻՍԼԱՄՈՒԹԻՒՆԸ

Վերջնական, աշխարհակալ նպատակին համար համար, համիսլամականները մտածում են նախ և առաջ իրականացնել իրանց մօտաւոր նպատակը, որ և պէտք է ծառայէ իրանց պագայ ծրագրերին իբր հիմք ու յենակէտ:

Բայց ինչպէս պէտք է հասնել այդ մօտաւոր նպատակին, ինչպէս պէտք է դօրացնել թոյլ Թիւրքիան, միաւորել այդ պարտառուած փալաւը, միապաղաղ ու միաձոյլ մի ամբողջութիւն, մի ազգութիւն կազմել այդ բազմացեղ, բազմալեզու ու բազմալրոն Բարեկանը:

Այդ նպատակին հասնելու համար համիսլամականներն ունեն արդէն իրանց որոշ տակտիքը, գործելու որոշ եղանակը կամ ներքին քաղաքականութիւնը, որի գլխաւոր տարրերը կամ գործադրուող գլխաւոր միջոցները հետեւալներն են.

ա) Նեղել ներքին ոչ-իսլամ տարրերը և առաջ քաշել մահմեղականներին:

բ) Համերաշխութեան եռանդուն պրօպաղանդ ներքին իւլամների մէջ:

գ) Սահմանափակող օրէնքներ արտաքին քրիստոնեանների դէմ:

դ) Արտաքին ձեի պրօպագանդ:

Ծանօթանանք այդ բոլոր միջոցների հետ առանձին-առանձին:

Վաղուց է գոյութիւն ունի՝ «Թուրքիան երիտասարդացներ» (rajeunir la Turquie) գաղափարը: Դեռ 1790-ական թուերին Նապոլէօն Բոնապարտը մտածում էր գնալ Թիւրքիա, մտնել ծառայութեան մէջ, վերակազմել, երիտասարդացնել Արևելքը, Նապոլէօնին բախտը կոչեց այլ ասպարէցի վրայ, բայց նր չ գաղափարը չը մնուաւ. Նա Ֆրանսիայից Անգլիա անցաւ, Խրիմի պատերազմից էլ առաջ անգլիական բոլոր մինիստրութիւնները՝ թէ Տօրի, թէ Վիգի, տեսնելով Ռուսիայի տարածուելը մի կողմից՝ դէպի Աւղանստան (ուրեմն և Հնդկաստան), Միջին-Ասիայով, միւս կողմից՝ դէպի Պարսից ծոց և Միջերկրական, Հայկական բարձրաւանդակի վրայով, շտապեցին հնարներ մտածել՝ պարխազ քաշելու իրանց վտանգ սպաննացող ոռւսական այդ առաջխաղացութեան դէմ: «Նենդ Ալրիօնը» մի կողմից զինել սկսեց Աւղանստանը, ամեն կերպ ամրացնելով նրա սահմանները, օգնելով նրան զրամով, զէնքով ու բանիմաց մարդկանցով, իր հլու գործիքները դարձնելով նրա էմիրին ու կառավարիչներին. միւս կողմից՝ Պասկեվիչի կոիւներից յետոյ պարզ ու որոշ կերպով գրուեց Թիւրքիայի վերակազմութեան ինդիրը ընդդէմ Ռուսիայի:

Այդ վերակազմութեան քաղաքականութեան արդիւնք էին Թանգիմաթն ու Խատուը-Հիւմայունը. դրա արդիւնք էր մասսամբ Խրիմի պատերազմը, Թիւրքիային այդ ժամանակ եղած ներսուական օգնութիւնը, այդ պատերազմից յետոյ մինչև 1876

թիւը Թիւրքիային արուած և բուպական 12 հսկայական վոլխառութիւնները, որ համնում էին մօտ 200 միլիոն ուկու գումարի (մօտ 2 միլիարդ ռուբլի): Այդ իրար ետեից արուող վոլխառութիւնները պէտք է ծառայէին սուլթան Ազիզին իր միջոց՝ վերակաղմելու թրքական բանակը, նաւատորմը, բերդերը և կեանքի մէջ հապես գործադրելու Թանգիմտթն ու Խաւալը-Հիւմայունը: Անդիման կարծում էր թէ այդ միջոցներով Թիւրքիան կը գառնար մի նորագոյն, լուսաւոր ու զօրեղ եւրոպական պետութիւն և կը ծառայէր իր մի անընկճելի պարխապ Ռուսաստանի գէմ:

Բայց պատմութիւնը թոփչքներ չի սիրում: Զի կարելի Ս. Գրիկայի Քաֆրներից կազմել մի կանոնաւոր ու զօրեղ միապետութիւն կամ Պարսկաստանը վերածել էական հանրապետութեան: Այդպէս էլ չէր կարելի օտարների ցանկութիւնով և մի քանի վարիչ շրջանների համաձայնութիւնով բարբարոսութեան աստիճանի վրայ գտնուող թրքական բռնակալութիւնը՝ մի անգամից գարձնել մի կանոնաւոր, լուսամիտ ու անհմանազբահան պետութիւն: Սրդիւնքն այն եղաւ, որ չես թիւրք վարիչներն ընկան ծայրացեղ շայլութեան, զեղութեան ու անբարոյականութեան գիրիկը, ծախսեցին փչացրին բոլոր փոխ առնուած գումարները, գյուցին՝ 4—500 տարի մի կուպէկ օտարից պարագ չառած Թիւրքիան 200 միլիոն ուկու հսկայական պարտքի տակը, դարձնելով նրան անտեսապէս սարուկ եւրոպական պարտատէր ու հզօր պետութիւնների ձեռքին \*):

Միայն այդ բոլոր պարագաների մէջ կազմուեց ու մնաց «Երիասարդ Թիւրք» կուսակցութիւնը, որ հնարաւոր էր համարում միաւորել Թիւրքիայի բոլոր ազգերը Օթօման անուան տակ—առանց կրօնի խորութեան, վերակազմել նրան և համել խալիֆների մեծաղօր գիրքին: Ալի-Սոււաֆի էֆէնդին, Քէմալ-Բէյը, Թիֆֆիկ-Բէյը, Զիա-Բէյը, Մէհմէդ-Բէյը, Ահմէդ-Միդհատ Բէյը, Միդհատ-փաշան, ևայլն, ևայլն, այդ զօրեղ կուսակցութեան պարագլուխներն էին, որ արտաքուստ ցոյց էին տալիս թէ ուղում են փոխ առնել եւրոպական լուսաւոր կարգերը, ներմուծել նրանց Թիւրքիա, եւրոպական քաղաքակիրթ պետութիւնների շարքն ընկնել... իսկ ներքուստ տածում էին կատաղի ատելութիւն գէպի եւրոպան ու այն ամենը, ինչ որ իսլամ չէր: Տիրահոչակ հերոս Միդհատ-փաշան, Թրքական կարճօրեայ սահմանադրութեան հեղինակը՝ մի կողմից աղատամիտ եւրոպա-

\*.) Տե՛ս այս առիթով „Stambul und“ das moderne Türkenthum<sup>2</sup>, von einem Osmanen Կամ Բ. Գոլովտ-ի աշխատութիւնը, — „Смутное время и дворцовый переворотъ“.

կան սկզբունքներից քաղուած իր սահմանադրութիւնն էր կազմում, բոլոր հպատակների—առանց կրօնի ու ազգութեան խըտաբան—հաւասարութիւնն էր քարոզում օրէնքի առաջ, իսկ միւս կողմից «Բոլղարական սարսահների» հրամանն էր սոսորագրում, 3 օրուայ մէջ 45,000 բոլղարների արիւնն էր հոսեցնում:

Երիտասարդ թիւրքերի ջերմ կուսակիցների թուումն էր և սուլթան Մեջիդի երկրորդ որդին՝ սուլթան Մուրադի եղբայր Արդիւլ-Համբեր էֆէնդին, ներկայ սուլթանը:

1876-ին գահընկէց արին երիտասարդ-թիւրքերը մեղկ ու թուլամորթ սուլթան Ազիդին և միքանի ամսից յետոյ՝ Զրադանի պալատի մէջ խողխողել տուին նրան երեք վարձկան սրիկայ փակիլվանների ձեռքով: Ազիդի տեղ, անդիմական դրդումով, գահը բարձրացրին հիւանդուու ու թոյլ Մուրադ V-ին, որ հազիւ միքանի ամսի թագաւորեց, մնալով հլու գործիք փառասէր Միդհատի և ուրիշների ձեռքին: Վերջապէս Միդհատ-փաշյին, իր երիտասարդ-թիւրք կուսակիցների չնորհով, յաջողեց իր եղբօրը իբր ցենուուծ գահից վայր գլորող Արդիւլ-Համբերի հետ բանակցութիւնների մէջ մտնել,  $1\frac{1}{2}$  տարի գոյութիւն ունեցող թրքական «սահմանադրութիւնը» հրատարակել և, իր կարծիքով, նոր ու լուսամիտ համիւլամական եպօխա սկսն թրքական պատմութեան ու կենաքի մէջ:

Այս, երիտասարդ թիւրքերի ագեպտ Համբեր գահը բարձրացաւ և, հազիւ ոոււս-թիւրքական պատերազմը վերջացած, իր խելական երիտասարդ-թրքական դոյնն ու ձգտումներն՝ առանց կեղծիքի, առանց քողարկութեան սկսեց արտայայտել: Բանա, աքսոր, կախալան ասպարէզ եկան իր նախկին կուսակիցների համար: Միդհատ-փաշա, Զիաւ-Բէյ ևայըն—աքսորուեցան Արաբիա, ուր և թոյնով մեռան հազիւ մի երկու տարի ապրելոց յետոյ: Մահուցի տակ զրուեց սահմանադրութիւնն ու թանգիմաթթը, արդարութիւնն ու հաւասարութիւնն օրէնքի առաջ... Եւ բոլոր փարիչ շրջանների համար թագաւորող սկզբունքը դարձաւ պարզ ու մերկալարանոց համիւլամութիւնը: Ով իսլամ չէ, նա չը պէտք է մայ թիւրքիայում...

Եւ սկսուեց թիւրքիայի ոչ-իսլամ տարրերի իսկական խաչհանութիւնը: Սկսեցին տանջուել հայն ու բոլղարը, յոյնն ու սերբը, քրիստոնեայ ալբանացին ու գիւրզին... Սկսուեցին ամեն հնարաւոր միջոցներ գործադրուել նեղելու, ճնշելու ոչ-սահմեդական տարրերին, նրանց հեռացնելու թէ պաշտօնէութեան ասպարէզներից, թէ վաճառականութիւնից, թէ նոյնիսկ գործաւորութիւնից: Սուլթան Համբերի վարչութեան մէջ թա-

գաւորող սկզբունքը հետևեալը եղաւ. նեղել բոլոր ոչ-մահեցական տարրերը, քայքայել նրանց նիւթապէս, բարոյապէս ու ֆիզիկապէս. ստիպել նրանց սնանկանալու, մեռնելու, կրօնափոխ լինելու, երկրից դուրս փախչելու, որպէսզի նրանց թիւը քշանայ, նրանք արմատախիլ լինեն և դրանով իսլամ տարրերը միայն մնան իր երկրի ընդարձակ սահմաններում:

Բայց բոլորին միանգամից և միևնոյն չափով չէր կարելի ճնշել. եթէ ոչ, բողոքն ու դիմադրութիւնը խիստ զօրեղ կը լինէր. Մաքիավելիի թիւրք աշակերտները շատ լաւ զիտէին իրանց դասերը. նրանք բաժանեցին, երկառակութիւն սերմանեցին զոհերի մէջ, որպէսզի աւելի դիւրութիւնով տիրեն նրանց. Հայերին բաժանեցին երեք միլլիէրի. Հայ-կաթոլիկը հայ չէր, այլ էւրմէնի-կաթոլիկ միլլէթիւ. Դրանով կարողացան զըրաւել հայ-կաթոլիկներին, որնաց մէջ պակաս չէին Զնդոյեան-ների նման քսու և ստոր հոգեորականներ ու աշխարհականներ, որնաք չը տեսնելու տուին թիւրքերի իսկական նպատակը և, ժամանակաւոր յաջողութեան համար, բաժանուեցան հայութիւնից, դարձան լրտեսներ ու դործիքներ թիւրք Մաքիավելների ձեռքին:

Նրանք բաժանեցին ու մահացու թշնամի դարձրին բոլղարներին ու սերբերին, յոյներին ու կուցօ-վալախներին. Ուրումը ցանուած էր Մակեդոնիայի մի հայրենիքի զաւակ միակը ցեղերի մէջ. ամենքը թշնամացան ամենքի դէմ\*), թէւ ազգայնական անտագօնիզմը կար այդ ցեղերի մէջ առաջ էւ, բայց նա երբէք հասած չէր այն հրէշաւոր չափերին, որ գոյութիւն ունի այսօր, չնորհիւ թրբական դիվլօմատների:

Վերանորոգուեց կրետացիների տանջանքը և տեսց մինչև 1897 թիւը, երբ երջանիկ կղզին վերջապէս ազատուեց թիւրքական լծից: Նոյն հալածանքը հանուեց և քրիստոնեայ ալրանների ու ոչ-քրիստոնեայ դիւրզիների դէմ:

Բայց, կրկրում ենք, ամենքին միասին ու միաշափ չէր կարելի նեղել. Դրա համար կառավարութիւնը իր յարձակման առաջին կէտերը նշանակեց հայերին ու Մակեդոնիայի բոլղարներին:

Արարաշխարհ դղրդացնող ջարդերը, բանտարկութիւնները, աքսորներն ու կախաղանները ծառայեցին ու պէտք է ծառայեն այդ տարրերի թիւը քշացնելու համար: Կառավարութեան ու նրա հաւատարիմ դաշնակից ամեն ազգի վաշխառու-

\*) Այս առիթով տե՛ս Bresnitz von Sydacoff-ի „Soll die Türkei getheilt werden?“ գրքուն:

Ների հնարած արհեստական ու բնական սովորը պէտք է հաս-  
նեն նոյն նպատակին՝ սովաման կոտորելով նրանց Եթէ այդ  
աղջտներին զոհ գնան միքանի իսլամներ ևս, վաս չունի. ա-  
մեն նպատակ զոհ է պահանջում: Երթիւնեկութեան արգելուելը  
գաւառներից Պօլիս և ընդհակառակը՝ մեռցրին ու զեռ պէտք է  
մեռցնեն առեսուրն ու վաճառականութիւնը: Քրդերի և առնա-  
ռուսների զինուած թալանն ու խժդութիւնները պէտք է կոր-  
ծանեն հայ և մակեդոն երկրագործի տնտեսութեան հիմքերը:  
Այս բոլորի հետ միանալով կառավարութեան նպատակով բռո-  
նած նեղիչ ու քայլայիչ գիրքը, պէտք է ստիպեն հային ու մա-  
կեդոնացուն գաղթել իրանց երկրից, գուրս գալ Թիւրքիայից, ա-  
զատել իրանց ըսնած տեղը, հողը, գիւղը և տունը, որոնց իսկոյն  
գալիս տիրանում են քիւրդն ու չերքէզը, ալրանացին ու թիւր-  
քը: Եթէ վերադառնում է բացակայ տէրը և պահանջում իր սե-  
փականութիւնը—լող չի լինում: Գեալիւր, ասում են ու վանդում:  
Եթէ շատ խօսեց՝ ծեծ, հրգեհ, սուր ու զնդակ պատրաստ են:  
Օրէնքը փակում է իր աշքերը, չը տեսնելու է տալիս և նոյնիսկ  
խրախուսում է այդ տեսակ վարմունքները:

Մի անգամ ջարդից կամ հալածանքից փախած, սովից  
նեղուած՝ օտարութեան աշխատելու գնացած հայը կամ բոլ-  
ղարը այլևս ոչ մի հնարով չի կարողանում վերադառնալ իր  
բնակավայրը. իսկ եթէ մի որեւէ սատանայական միջոցով յա-  
ջողեց ներս մտնել, երբէք չի կարողանում տիրանալ իր  
նախկին տներին ու հողերին: Ռուսաց հոգոր կառավարութեան  
բազմաթիւ գիմուններով անգամ հնար չի լինում սրի ու սովի  
ճանկերից փախած՝ կովկաս գաղթած 50,000 անօթիւծարաւ  
թիւրքահայերին վերադարձնել իրանց ծննդավայրերը, տիրացնել  
իրանց նախկին ստացուածքներին, նոյնն է և մակեդոնացիների  
վերաբերութեամբ: Այսօր հաշւում են միքանի հարիւր հազար  
մակեդոն գաղթականներ Բոլղարիայում, որոնց մեծ մասը ուզում  
է վերադառնալ իրանց երկիրը, բայց չեն թողնում: Շատերն էլ  
փախենում են զնալ. «կօմիտածին պիտի կոչուեն, թիւրքական  
անտանելի դժողք-զնդանը պէտք է նետուեն»:

Ու պարպւում, գատարկւում են գաւառները իրար ետե-  
սից. ամայանում ու խոպանանում է մայր հողը... որովհնտե-  
ռուզում են նուազեցնել ոչ-իսլամ տարրերը:

Այս աւերիչ շարժման կից կատարւում է, թիւրք Մաքիա-  
վելիների կարծիքով, մի ուրիշ, ուա՛ ժինող բնաւորութիւն ու-  
նեցող շարժում: Բոլոր գաղթող, սովաման լինող և կոտորուղ  
քրիստոնեայ տարրերի տեղը գալիս, լցւում են իսլամ տարրեր:  
Բոլոր քրիստոնեայ պետութիւնների մէջ բնակուղ իս-

լամերին հետեղական ու եռանդում քարոզներ են կարդացւում Պօլսից գնացող մօլլաների ու սօվթանների կողմից: Այդ քարոզները խիստ գրգռիչ ու ոգեսրող բնաւորութիւն ունեն, Նրանք վառ գոյներով նկարագրում են սուլթանների գթառատութիւնն ու սէրը գէպի բոլոր իսլամները, մանաւանդ գէպի գեավուրների ծանր լծի տակ հեծող հաւատացեալները, Նրանք հրաշքներ են պատմում իսլամութեան Եղիսան Դաւթի, մահմեդականների Աւետեաց-երկիր Թիւրքիայի առատութեան մասին, այնտեղ թագաւորող Շերիերի արդար օրէնքների մասին... Խօսք մէջ հասկացնում են որ այնտեղ միւսլիմն իրան չատ ազատ է զգում, գեավուրին թալանելը, նրան նոյնիօկ սպանելը մնդք չէ այնտեղ - երջանիների աշխարհում...

Մոյլ, մնդկ ու ոչ-կուլտուրական իսլամ տարրերն ամեն քրիստոնեայ պետութեան մէջ յետ ընկած, աղքատ վիճակի մէջ են, Այդ աղքատութեան պատճառը՝ մօլլաներն ու քարոզիչները բացատրում են անհաւատութեան թագաւորութիւնով: Նրանք բացատրում են իսլամներին իրանց կրած վիրաւորանքներն ու հալածանքները այդ քրիստոնեայ երկրներում և հրաւէր են կարդում գաղթել ապօրինութեան, աւագակութեան ու բաշխօգուկութեան Աւետեաց-երկիրը՝ Թիւրքիա: Քրիստոնեայ պետութեան օրէնքներից կաշիներն այրուած իսլամների երևակայութիւնները բորբոքում են: Եւ ահա Բողզարիայից, Ռումանիայից, Բոսնիայից, Հերցեգովինայից, Կրետէյից, Կիպրոսից, Յունաստանից, Խրիմից, Կովկասից ու Անդրկասպեան երկրից շարան-շարան զալիս, լցուում են Թիւրքիա մահմետական հոսանքներ: Վերջին սուս-թրքական պատերազմից մինչեւ այժմ միայն Կովկասից՝ առնուազը 200,000 թուրքեր, քրդեր ու չերքէզներ են գաղթել Անատոլիա, լցուել հայկական վեց վիլայէթները \*): և Կիլիկիա: Բոսնիայի, Հերցեգովինայի, Բողզարիայի ու Ռումինիայի գաղթականներն էլ խուժում են Մակեդոնիա: Կրետէի, Կիպրոսի և Յունաստանի իսլամները թափուում են Այդինի վիլայէթը: Գեավուր-հղմիրի շրջակագրը:

Դրանք բոլորն էլ այրուած կաշիներ ու դաղուած սրտեր ունեն. դրանք գրգռուած, զայրացած են գեավուրների գէմ, մահացու թշնամի են նրանց: Դրանցից աւելի դազանական բաշխօգուկ տարրեր երբէք տեսած չի կարող լինել մարդկային

\*): «Հայկական վեց վիլայէթ» ասելով՝ մէնք հասկանում ենք Վանի, Բաղէշի, Կարսի, Գիարբեքիրի, Խալբրերդի (Մամուրէթ-իւլ-Ազիզ) և Սլաղի վիլայէթները, որ 1895 թուի եւլուսպական «կօնտրու-կօմիսախօնի» կողմից ճանաչուեցան իրը հայկական նահանգները.

պատմութիւնը, Գալիս են աղքատ, օրուան հացի կարօտ և կարծ ժամանակում՝ կառավարութեան օգնութիւնով և օրէնքի խրախոյսով թալանում, իւրացնում են դրացի քրիստոնեաների կենդանիներն ու գործը, և հարստանում:

Դրանք են Թիւրքիայի ամենից շուա բռնկուող ֆանատիկոս ասրբերը: Դրանք են մաքիավիլ վարիչների ծրագրերն իրականացնելու յարմար ու պատրաստ զէնքերը, Մի-երկու ու գեորիչ ու կրօնամոլութիւն գրգոռող խօսքեր, գիւրին վաստակի ու կողոպուտի մի գողարիկ հեռանկարի հետ միասին՝ և ահա այդ գիւրաբորքոք տարբերը համիսլամական ծրագրերն իրականացնելու համար ամենափայլուն գործիքներ են. պէտք է որ կառավարութիւնը դրանց օգնէ, առաջ քաշէ, նպաստէ գտլու, հաստատուելու և արմատ բռնելու:

Եւ այդպէս էլ է: Պոլսում կայ մի յատուկ մարմին, որ կոչւում է «Մուհամմադօմիսիօնի» (գաղթականների յանձնաժողով), Նա գտնուում է երլարզի անմիջական հովանաւորութեան տակ և օգտուում է նրա բարձրագոյն պաշտպանութիւնով: Այդ կօմիսսիան է հոգում Թիւրքիա գաղթող իսլամների բոլոր պէտքերը: Նա է նրանց համար ազատ հողեր գտնում, նրանց ճանապարհի, հաստատութեան, գիւղատուն շինելու, արտ-անդասասան օարբելու բոլոր ծախքերը հոգում:

Մուհամմադօմիսիօնին ուղարկում է միշտ յատուկ յանձնաժողովներ գէպի Անատոլի և Ռումելի նահանգները՝ «Եկող ու գալիք իսլամ մուհամմադների համար յարմար տեղեր սրոշելու»: Եւ, զարմանալի զուգադիպութիւն, միշտ յարմար տեղեր համարւում են կամ հայերի ու բոլղարների հողերը, կամ նրանց գիւղերի անմիջական դրացի հողերը:

Կովկասից գաղթած բոլոր քրդերին ու Թիւրքերին տեղաւորում են հայկական վիլայէթներում և իսկայն նրանց գրում Համիդիէ ձիաւոր զօրքերի շարքը: Կովկասից գնացող բոլոր լազերին տեղաւորում են Տրապիզոնի մօտերքը, ուռասկան սահմանների վրայ: Այդ բոլոր գաւառներից աւելի եռանդով աշխատում են իսլամացնել կիլիկիան, Տաւրոսի բարձունքը: Կովկասի լեռներին վարժուած բոլոր չերքէզները քշում են գէպի Զէյթունի, Ֆռնուզի, Հանընի, Մարաշի ու մասամբ Այնթարի շրջակացքը:

Ալբաններին և Բոլղարիայից գաղթողներին էլ տեղաւորում են մակեդոնական բոլղարների ու սերբերի կենարուներում, լեռնոտ ու ամուռ տեղերի վրայ կամ նրանց շուրջը:

Այս ամենը կատարուում է պարզ ու սրոշ նպաստակավ, առաջին յարմար պարագային իսկոցն քաջքայել ու աւերել քրիս-

տոնեաների բռնած ոլոր այն կէտերը, որոնք կարող են ծառայել իբր պաշտպանութեան կամ դիմագրութեան դիրքեր կոտորածների ժամանակ:

Մուհաճիր-քօմիսսիօնին ունի բաւական խոշոր եկամուտաներ: Նա ստանում է պետութիւնից որոշ նպաստ. նա ունի անսահման իրաւունք ներկայացումներ ու համերգներ տալու; վիճակախաղեր սարքելու, նուէրներ ու ժառանգութիւններ սահնալու, ևայլն: Այդ բաւական չէ, 1899 թուին սուլթանական մի իրադէով որոշուեց ամեն ինսդիրների, պատեհանների, առուծափի գրերի, մուրհակների և այլ գրութիւնների վրայ կացնել յատուկ փուլեր կամ մարկաներ «յօգուտ մուհաճիրների», համաձայն թղթի կարեսութեան կամ նշա մէջ յիշած գումարների: Այս բեռի ամենամեծ մասն էլ ծանրանում է քրիստոնեանների վրայ:

Երբ 1899-ի հոկտեմբերին՝ օրինական կարգով գործադրութեան մէջ մտան այդ փուլերը, թիւրք լրագիրները, — յատկապէս ելլարզի օրգան «Մալումաթն» ու «Իդղամ»-ը — գնահատեցին մօտաւորապէս 60,000 ոսկի նրանց եկամուտը ամբողջ պետութեան մէջ:

Ի հարկէ այդչափ ընդարձակ միջոցներով օգտուող մի մարմին կարող է ահազին թիւ սակաւագէտ ու թալանով ապրող գաղթականներ լցնել թիւրքիա: Եւ նա անում էլ է այդ բանը մնե եռանդով:

Ի՞նչ կասկած որ մուհաճիր-քօմիսսիօնին ունի իր ստորաբաժանումները պետութեան բոլոր գլխաւոր տեղերում: Կազմուած Պօլսի կենարունից իբր վատահելի և էապէս իսլամ ձանաչուած տարրերից, կարելի է պնդել որ դրանք թրութեան ամենաթթու և քրիստոնեակեր տարրերն են:

Այդ մարմինն ունի և այլ ֆունկցիա: Թիւրքիա վերաբարձող կամ գուրս մեկնող, Պօլսից գաւառներ գնացող կամ գաւառներից Պօլս եկող բոլոր հայերն ու բոլղարները պէտք է անցնեն նրա ձեռքով. նա պէտք է տայ բաղաբական վիտահելիութեան վկայական, առանց դրան՝ անհնար է ներքին կամ արտաքին թեսերե (անցագիր) ստանալ: Առանց նրա որոշման ոչ մի քրիստոնեայ ուայա չի կարող մտնել թիւրքիա կամ գուրս գալ այնտեղից: Իսկ այդ մարմին հոտած-իսլամ անդամները ևրէք չեն համաձայնում ներս ընդունել մի անդամ արդէն գուրս ելած գեափուր տարրերը: Նրա միակ վճիռները քրիստոնեանների դէմ միայն աքսոր ու բերդարգելութիւնն է:

Քրիստոնեաններին յետ քչելու, նրանց թիւը քչացնելու և խորամներին առաջ քաշելու, համար՝ նոյնիսկ Պօլսի մաքսաների, երկաթուղինների, ծովափերի և այլ գործերի մէջ աշխատող

բոլոր քրիստոնեայ տարրերին գուրս են քշում և նրանց տեղը լցնում են Անատոլիայից բերուած և օտար երկներից գաղթած իսլամներ, զլսաւորապէս քրդեր: Նոյն ձեռվ են սկսել վարուել և Անգորայի, Զմիւռնիայի, Սալոնիկի, Բէյրութի և ուրիշ տեղերի երկաթուղիների, մաքսատների և ծովափերի վերաբերմամբ: Այսօր թէ Անատոլիի, թէ Ռումելիի մէջ ոչ մի աշարառու կամ միւլթէզիմ<sup>\*)</sup> քրիստոնեայ չէ: Այդ արհեստը, որ ժառանգաբար հայերի, յոյների և բոլղարների ձեռքին էր, բացառապէս քրդերի, թիւրքերի ու ալբանների ձեռքն է անցած:

Աշխատում են հասարակական պաշտօններից հեռացնել բոլոր ռայա քրիստոնեաները և ձգտում են ամեն պաշտօնի վըրայ գնել զուտ և թթու իսլամ տարրեր: Երբ անհնար է, օրինակ, որեւէ յարմար ֆինասիստ գտնել իսլամների մէջ, այն ժամանակ միայն ստիպուած համաձայնում են քրիստոնեայի զիջել այդ տեղը: Դրանով պէտք է բացատրել, օրինակ, Սագրդ Յովհաննէսի սուլթանի անձնական գանձի և ֆինանսների մինիստր, Տատեան Արթինի արտաքին գործերի առաջին քարտուղար կամ Կարա-թէոդորիի այս ինչ տեղ գեսպան լինելը: Այդպիսիների թիւն էլ այժմ շատ սակաւ է: Այդ բարձր պաշտօնեայ ռայաների մեծ մասը «աւելի թիւրք են, քան բուն թիւրքերը». Նրանք մի-մի ցեց ու դահիճ են իրանց կրօնակիցների համար... բայց և այնպէս թիւրք կառավարութիւնը չի սիրում նրանց, այլ միայն սիրպուած համբերում է: «Էւաւ են, շատ լաւ, բայց ափանս որ իսլամ չեն»...

Նոյն համիսլամական ձգտումների արդիւնք է ամեն տեսակ մենաշնորհներ ու մենավաճառներ իսլամներին աւելի դիւրութիւնով տալը, քան քրիստոնեաներին: Այսպէս, օրինակ, մի որեւէ արդիւնաւէտ ձեռնարկի մենաշնորհն աւելի շուտ տրապիզոնցի թուրք գրամատէր Նէմիլ-զադէներին կը տան, քան որեւէ քրիստոնեայի, եթէ նոյնիսկ այդ վերջինը կրկնակի օգուտներ ցոյց տայ կառավարութեան գանձարանին:

Ամեն տեսակ առուծախի, դատի ու վէճի ժամանակ պարզ կերպով երեւում է որ կառավարութիւնը միշտ ձգտում է բունել իսլամների կողմը—արդար թէ անարդար, նեղել ու ճշ-

\*) Աւեար կոչում է Թիւրքիայի Երկրագործական հարկը (աշրատասը, աշար—տասանորդ), որ միշտ ծախում է մասնաւոր անձերին՝ կապալով. կապալառուն կոչում է միւլթէզիմ: Եթէ միւլթէզիմը վերցրել է միայն մի երկու զիւղի աշար, ինքն է պարտում կալերը, չափում ցորենն ու հատիկները և 8-ից 1-ը առնում. իսկ եթէ նա վերցրել է շատ զիւղեր կամ զաւառ—նա նշանակում է շահնաներ կամ միւլթէզիմի օգնականներ:

շել քրիստոնեաներին և արտօնեալ դիրքի մէջ դնել, երես տալ իսլամներին:

Վերեռում յիշուած բոլոր միջոցները գործադրուում են միայն ռայա քրիստոնեաների վերաբերութեամբ. նրանք չափ կողմնակի կերպով են դիպչում օտարահպատակներին, որոնք ունեն հիւպատոս ու դեսպան պաշտպաններ:

Այդ վերջները կատարեալ մենաշնորհնեալ դիրք ունեն ամբողջ Թիւրքիայի՝ մասնաւանդ ծովափնեայ քաղաքների մէջ: Ոչ ոք չի կարող նրանց ձեռք տալ, մի կոպէկին դիպչել:

Դրանց վերաբերութեամբ էլ կառավարութիւնն ուզեց միքանի սահմանափակող օրէնքներ հրատարակել, բայց իսկոյն հանդիպեց Պոլսի դեսպանական մարմնի միահամուռ դիմադրութեան:

Այսպէս՝ 1900 թուի սկզբներին Բ. Դուան երկու ներքին շրջաբերականները հրամայում էին հետևեալ երկու կէտերը. «Գերեզմանոցների (խալամ), մղկիթների և այլ սրբավայրերի մօտերը—այսչափ մետր շրջապատում—ոչ մի քրիստոնեայ նոր կալուած գնելու իրաւունք չունի. ունեցողներն էլ՝ ծախսելու դէաբում պէտք է տան միայն իսպամի, ոչ երբէք քրիստոնէի»: Այս էր առաջին շրջաբերականի մօտաւոր բովանդակութիւնը: Երկրորդը վերաբերում էր Թիւրքիայի հանքային հարստութեան: Նա հրամայում էր բոլոր այն խալմներին, որոնք մենաշնորհներ են ստացել կամ ստանում են այս ու այն տեղերում հանքեր մշակելու՝ չը տալ իրանց իրաւունքը կամ չը ծախսել այդ իրաւունքը օտարահպատակների: Այսպէս վարուողները կ'ենթարկուեն պատժի, ասում էր այդ շրջաբերականը:

Ի հարկէ այդ երկու թղթերն էլ գրուած էին Երլուզզի անմիջական ներշնչումով, նրա հրամանով \*): Բայց պալատն ինքն ուղղակի հրամայել, կամ կայսերական իրադէ բաց թողնել չը յանդգնեց, որովհետեւ չը գիտէր, թէ ինչ դիրք պէտք է բռնեն մեծ պետութիւնների ներկայացուցիչները. վախենում էր, որ իրադէ անելուց յետոյ՝ ստիպուած լինի յետ առնել կայսերական

\*) Թէկ Թիւրքիան ունի լեզվիներ (նախարար) և մեծ-եւպարքոս (մինիստր-նահագահ), պատախանառու նախարարական մարմն, պետական խորհուրդ, ևալլն, բայց այդ բոլոր պաշտօնները լոկ ձեւական, արտօնութեան են: Յոլոր այդ պաշտօնների վրայ նշանակում են պալատի հլու-հպատակ, կոյր գործիք, տղէտ ու բժամիտ գոեհիկներ, որպէսպէտ գործերի ղեկը մնայ լոկ Երլուզզի-սուլթանի, նրա անձնական քարտուղարների (Խէթ-Թէկ և Խալահիմ-Թէկ), ներքինիների և հոմանիների ձեռքը: Տե՛ս այս մասին Edmonde Fasy-ի գիրքը. „Les turcs d'aujourd'hui ou le Grand Karagheuse“.

խօսքի և պատահած այդ օրինակ բազմաթիւ խայտառակութիւնների վրայ մի նորն էլ աւելանայ:

Պալատը հրամայեց անել և աղաւելի ձեւացաւ. «Նշչից տեղեկութիւն չունի: Մնաց սպասողական գիրքի մէջ: Բայց երբ տեսաւ Երլարզը որ դեսպանները միահամուռ բողոք բարձրացրին՝ իսկոյն հրամայեց Բ. Դուան—«Ճ գիրչել բարեկամ պետութիւնների հպատակների իրաւունքներին, որ չնորհուած են ամենողորմած Սուլթաններից»:

Դեսպանների բողոքը մօտաւորապէս հետևեալ ձևով էր. «Հրատարակելով այդպիսի սահմանափակող օրէնքներ սեփականութեան և հանքերի շահագործութեան մասին, Բ. Դուոր մոռանում է որ դրանով ոտք տակ է տալիս գաշնագրերը և զորկում է մեր հպատակներին սեփականութիւն ունենալու և աշխատելու անբռնաբարելի իրաւունքներից»:

Եւրոպական մամուն էլ, մանաւանդ գերմանականը («Erankfurter Zeitung», «Berliner Tageblatt», Ապրիլ), միքիչ քօղը վեր վերցրին Տրանսվալի գործերի վրայից և ցոյց տուին որ այդ կատաղի ու անարդար կոտի իսկական պատճառը եղաւ հանքային հարստութեան մշակութեանը վերաբերող Տըրանսվալեան: Օրէնսդրութիւնը: Բոլոր արմատական թերթերը կամցուկ լոել տուին սուլթանին, որ այդ տեսակ սոսկ նիւթական ինդիրների համար Եւրոպան պատրաստ է հազար անգամ աւելի շուտ արիւն թափել, քան միքանի հարիւր հազար քրիստոնեայ ռայաների ջարդի համար:

Եւ Բ. Դուոր պոչն իրան հաւեց. յետ առաւ իր հրամանները:

Նոյն տեսակի մի վճառական ու յուսահատ փորձ էր և Եւրոպական փոստատների ինսդիրը Պօլսում այս տարի, որ այնքան քաջութիւնով յարուցեց Բ. Դուոր և այնքան լսկիրց անմեղութիւնով հրամայեց յետ անել իր հրամայածը Երլարզ-Քէօքը:

Սյս տեսակ բազմաթիւ փորձեր են արուած, արւում են ու դեռ պէտք է արուեն թիւրքական «Օթօման» պատրիօտների ձեռքով, մինչև որ Եւրոպայի համբերութեան հսկայական ու առաջական բաժանակը լցուի և մի օր վճարէ նրանց արդար գարձը՝ պատառ-պատառ անելով Հիւանդ-Մարդու սնանկութիւնից մնացած գովքը:

Քրիստոնեաներին նեղող այս բողոր ձգտումներին կից ընթանում է իսլամ ներքին տարրերի մէջ գրաւոր և մանաւանդ բերանացի մի շատ զօրեղ պրօպագանդ:

Թիւրքական բռնակալութիւնը զգալով որ իր ամենազօրեղ հիմքն է Ղուրանն ու կրօնամոլութիւնը, իր գործակից մօլլաների, սօֆթաների, իմամների ու զերվիչների միջոցով

աւելի ու աւելի է գրգռում մութ ամբոխի ֆանատիկոսութիւնը, միշտ վառ է պահում նրանց մէջ ատելութիւնը դէպի գեավուրները, խոստանալով իսլամներին զիններ այն կեանքում և քրիստոնեաների գոյքերից հարուստ կողոպուտ այս կեանքում, որ, խոստովանած, աւելի է ազդում աղքատ ու ձրի ապրելու վարժուած գաղթական ու տեղացի գոենիկ տարրերի վրայ, քան Ղուռանի բոլոր խօսքերը:

Այս բազմաթիւ գրգռիչ-գործակալները տարածում են քրդերի, առնապուտների, բեղուխների ու տգէտ թիւրք ամբոխի մէջ խալամական համերաշխութեան գաղափարը. ոգեսրում են նրանց միշտ պատրաստ լինել համախմբուելու Սանջազը-Շերիթի սրբազն սոուերի տակը, գնալու գեավուրների գէմ սրբազն պատերազմի, մեռնելու լոյս հաւատի համար... Նրանք զինում են իրար գէմ գարերով իրար հետ հաշտ ու մտերիմ ապրած քրդին ու հային, թիւքին ու ասորուն, առնապուտին ու բոլղարին, նրանք հաշտեցնում են իրար հետ երկար տարիներ խոռվ ու կոռփ մէջ եղող քիւրդ բէգերին, աշիրէթներին և բեղուխն ու ալբան ցեղերին: Բարեկամացնում են իրար հետ և արեան վրէժ» ունեցող ցեղերը, բաց անելով նրանց աշքերի առաջ գեավուրների գէմ պատրաստուող մօտակայ «արբազան» կոռուի հեռանկարը:

Պակաս նշանակութիւն չեն տալիս համիսլամականները նաև արտաքին ձեւերին: Նետելով իրանցից թիւրք անունը, իսկոյն առնում են նրանք «Օթօման» տիտղոսը և կարծում թէ անուան փոփոխութիւնը նշանակում է էութեան փոփոխութիւն: Շատ յաճախ սիրում են երիտասարդ-թիւրք ասուած կեղծ-աղատամիտ ու ջուր-ծեծող կուսակցութեան անդամները ճառել եւրոպական ազատ երկրներում, գարեջրի բաժակն առաջներին՝ հայերի ու բոլղարների հետ՝ թրքահպատակ բոլոր դգօնի Օթօման տարրերի համերաշխութեան մասին: Կեղծիք, զգուելի կեղծիք: Պօլսի ներկայ վարիչները չեն քողարկում իրանց համիսլամական ձգտումներն ու կարմիր ծրագրերը, իսկ երիտասարդ թիւրքերը դիմակաւորում են իրանց ձգտումները, խարել են աշխատում սրբան-նրան «Օթօման» կամ «ղժգոհ տարր» դատարկ բառերով: Քերեցէք երիտասարդ-թիւրքերի մեծամասնութեան կաշին և նրանց տակ թագնուած կը տեսնէք ամենազուտ համիսլամականներ, նեղ ու այլատեաց հոգիներ, որոնք գուցէ արտաքուստ որկորներն են պատռում ներկայ թրքական հայակեր ուժիմի դէմ, իսկ իրանց սրտի խորքերում ծափահարում, «օխ, օխ», են ասում: Փաստերը քիչ չեն. թերթ և ցէք ախրահոչակ Մուրադ-բէյի ֆրանսերէն Մէշվէթների

այն համարները, որ լոյս տեսան 1894—96—97 թուերին, հայկական սարսափների ամենակատաղի ժամանակը։ Մուրագը քրանսերէն՝ Պարիզում, դօկտօր Հասան-Արիֆ Ժընէվում՝ թուրքերէն Մէշվէրէթներում կատարեալապէս արդարացնում էին սուլթանի բանած զիրքը դէպի հայերը և բոլղարները... միայն հայնոյում էին նրան, որովհետեւ բուրքերի հետ լաւ չի վարւում իսկ երբ Երլարը խոշոր պաշտօն ու դեղին մետաղ խոստացաւ, թէ Մուրագը, թէ դօկտօր Հասանը իսկոյն գնացին Կ. Պօլս, համբուրեցին այն ձեռքը, ծնրադրեցին այն անձի առաջ, որին այնքան հայնոյել էին... Այս երեսյթը, գաղափարի այդ առեսուրը պատահական բան չէ երիտասարդ թիւրքերի համար. դա բնական արդիւնք է այդ կուսակցութեան կեղծ, ընկեցիկ ծնունդի:

Արտաքին նշանների պրօպագանդի մէջ ամենադիմաւորը և կրթուած մարդու համար ամենածաղրելին «Ֆէսի պրօպագանդ» է։ Ո՞րպիսի ոգևորութիւնով արձանագրում են Պօլսի թիւրք թերթերը Հնդկաստանում կամ Կէպտօւնում միքանի էկացնենտրիկ մահմեմադականների ֆէս ծածկելու երևոյթը... Նրանք այդ համարում են խոլամական համերաշխութեան խոշոր գործնական քայլերից մէկը։

Երկրի ներսում ևս ֆէսի պրօպագանդը քիչ տեղ չի բռնում։ Զգտում են փոխել տալ բոլոր քրդերի «քօլօգները» և տեղը ֆէս ծածկել սովորեցնել։ Կը համարձակուի Անատօլիայի մէջ մի ույայ փոխել իր ֆէսը և եւրոպական որևէ գլխարկ ծածկել... «Գեավուր, ինչ վեաս տեսար մեր ֆէսից, որ հիմա «ա-լա-ֆրանկա» զիմարկ եւ ծածկում», կ'ասեն նրան պաշտօնեաները և յաճախ բանտ կը նետեն։ 1890—1901 թուերին նոյնիսկ Պօլսում պատահեցան միքանի այդպիսի դէպքեր, ուր մնաց գաւառներում... Նոյնիսկ 1900 թուի սկզբներում Ռուսաստանին կարսից երգում երկաթուղի շինելու վաղամեռիկ թոյլտութեան իրադէի մէջ՝ պայմաններից երկրորդական տեղ չէր բռնում այն կէտը, որ «ապագայ երկաթուղու բոլոր ծառայողները պեօք է Ֆէս ծածկեն։

### ԽԱԺԱԿ

(Կը օարունակուի)